# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
# ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.06.2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ՍՑ-ՆԳ-2021/139**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.05.2021թ. թիվ 26/26-1/8514-2021 գրությամբ Ա/Ձ Ինեսա Վարդանի Խոսրովյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 18.05.2021թ. թիվ 01/61-11427 գրության հիման վրա, 27.05.2021թ. թիվ 26/26-1/8514-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Ինեսա Վարդանի Խոսրովյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>Ա/Ձ Ինեսա Վարդանի Խոսրովյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ա/Ձ Ինեսա Վարդանի Խոսրովյանը, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ Ա/Ձ Ինեսա Վարդանի Խոսրովյանը գնումների գործընթացին մասնակցության հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի հայտարարած ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/115 ծածկագրով տնտեսական ապրանքների ձեռքբերման մրցույթին: Սակայն, գնումների էլեկտրոնային համակարգ /armeps.am/ հայտ կցող անձը ներկայացրել է սխալ գնառաջարկ՝ կոպիտ սխալներով /մեզ հետ առանց համաձայնեցնելու/՝

1. գնային առաջարկ ներկայացնելով առանձնացված ԱԱՀ-ով /չենք հանդիսանում ԱԱՀ-ով աշխատող/ և
2. յուրաքանչյուր չափաբաժնում ներկայացրել է մեկ միավոր ապրանքի արժեքը՝ հաշվի չառնելով ներկայացված քանակները:

Հաշվի առնելով վերոգրյալը, քանի որ վերջինս թյուրիմացություն է և չի ներառում դիտավորության որևէ տարր, խնդրում ենք Ա/Ձ Ինեսա Վարդանի Խոսրովյանին, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառել»:

Ա/Ձ Ինեսա Վարդանի Խոսրովյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/139 ընթացակարգի շրջանակներում 02.06.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.05.2021թ. թիվ 01/61-11427 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/115» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտ է ներկայացրել Ա/Ձ Ինեսա Վարդանի Խոսրովյանը:

Գնահատող հանձնաժողովը Մասնակցի հայտը գնահատելիս, արձանագրել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, այն է՝ մասնակցի կողմից ներկայացված 1.1 հավելվածում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) նշված չէ արտադրողի անվանումը:

Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 41-րդ կետով, առաջարկել է մասնակցին մինչև սահմանված ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը, սակայն վերջինիս կողմից այն չի շտկվել:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ Մասնակիցը խախտել է հրավերով ստանձնած պարտավորությունը, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով, որոշել է մերժել մասնակցի հայտը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/139 ընթացակարգի շրջանակներում 02.06.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2021/139 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2021/139 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/115» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել Ա/Ձ Ինեսա Վարդանի Խոսրովյանը:
2. Ա/Ձ Ինեսա Վարդանի Խոսրովյանի կողմից հայտով ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը (Հավելված 2).

ՀՀ դրամ

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| *1* | Պլաստմասե դույլ /5լ/ | 360 /երեք հարյուր վաթսուն/ | 90 /իննսուն/ | 450 /չորս հարյուր հիսուն/ |
| *3* | Զուգարանի թուղթ | 120 /մեկ հարյուր քսան/ | 30 / երեսուն / | 150 /մեկ հարյուր հիսուն/ |
| *5* | Զուգարանակոնքի մաքրող հեղուկ | 784 /յոթ հարյուր ութսունչորս/ | 196 /մեկ հարիյուր իննսունվեց/ | 980 /ինը հարյուր ութսուն/ |
| *14* | Սրբիչի կտոր | 520 /հինգ հարյուր քսան/ | 130 /մեկ հարյուր երեսուն / | 650 /վեց հարյուր հիսուն/ |
| *18* | Ռետինե ձեռնոցներ | 240 /երկու հարյուր քառասուն/ | 60 /վաթսուն / | 300 /երեք հարյուր/ |
| *19* | Սպունգ խոհանոցի | 80 /ութսուն/ | 20 /քսան/ | 100 /մեկ հարյուր/ |
| *20* | Հատակի ջնջոց /գործվածք/ | 440 /չորս հարյուր քառասուն/ | 110 /մեկ հարյուր տասը/ | 550 /հինգ հարյուր հիսուն/ |
| *23* | Հոտազերծիչ, օդ | 480 /չորս հարյուր ութսուն/ | 120 /մեկ հարյուր քսան/ | 600 /վեց հարյուր/ |
| *24* | Թղթե անձեռոցիկներ | 120 /մեկ հարյուր քսան/ | 30 /երեսուն/ | 150 /մեկ հարյուր հիսուն/ |
| *27* | Օճառ, հեղուկ | 520 /հինգ հարյուր քսան/ | 130 /մեկ հարյուր երեսուն/ | 650 /վեց հարյուր հիսուն/ |
| *34* | Աղբամանի սև ցելոֆոն | 280 /երկու հարյուր ութսուն/ | 70 /յոթանասուն/ | 350 /երեք հարյուր հիսուն/ |

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ա/Ձ Ինեսա Վարդանի Խոսրովյանի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում /առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/ նշված չէ արտադրողի անվանումը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 07.05.2021թ. ծանուցել է Մասնակցին՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել արձանագրված

անհամապատասխանությունները և որոշում է կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.05.2021թ. թիվ 26/26-1/8514-2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 18.05.2021թ. թիվ 01/61-11427 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև Ա/Ձ Ինեսա Վարդանի Խոսրովյանի կողմից ներկայացված դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/115» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել Ա/Ձ Ինեսա Վարդանի Խոսրովյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ա/Ձ Ինեսա Վարդանի Խոսրովյանի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում /առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/ նշված չէ արտադրողի անվանումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 07.05.2021թ. ծանուցել է Մասնակցին՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները և որոշում է կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Միևնույն ժամանակ Ա/Ձ Ինեսա Վարդանի Խոսրովյանը ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«(…) գնումների էլեկտրոնային համակարգ /armeps.am/ հայտ կցող անձը ներկայացրել է սխալ գնառաջարկ՝ կոպիտ սխալներով /մեզ հետ առանց համաձայնեցնելու/, գնային առաջարկ ներկայացնելով առանձնացված ԱԱՀ-ով /չենք հանդիսանում ԱԱՀ-ով աշխատող/(…):

Այս մասով հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: ***<u>Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:</u>***

Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ***<u>եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:</u> Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***<u>մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ</u>***:

Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: ***<u>եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:</u>*** Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ **<u>եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան</u>**, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Տվյալ դեպքում, https://www.petekamutner.am էլեկտրոնային կայքի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Ա/Ձ Ինեսա Խոսրովի Վարդանյանը չի հանդիսանում ԱԱՀ վճարող:

Մինչդեռ՝ Ա/Ձ Ինեսա Վարդանի Խոսրովյանի կողմից հայտով ներկայացված Հավելված 2-ով՝ գնային առաջարկով, նախատեսվել է ԱԱՀ:

Այսինքն՝ Մասնակցի հայտը ի սկզբանե ենթակա է եղել մերժման, մինչդեռ՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն անտեսելով, որ գնային առաջարկը կազմված և ներկայացված է սխալ, արձանագրել է միայն առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ և Մասնակցին առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունը, որից հետո միայն մերժել Մասնակցի հայտը՝ Հավելված 1.1-ում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

Նման պայմաններում, հաշվի առնելով Մասնակցի գնային առաջարկում առկա անհամապատասխանությունը, ինչպես նաև այն, որ տվյալ դեպքում գնային առաջարկում առկա անհամապատասխանությունն արձանագրված լինելու պայմաններում Մասնակցի հայտը, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, ենթակա էր մերժման, այսինքն՝ Հավելված 1.1-ում առկա անհամապատասխանության շտկման անհրաժեշտությունը բացակայում էր, հետևաբար գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով ծագած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և հանգեցնել վերջինիս նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառմանը, այն է՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.05.2021թ. թիվ 26/26-1/8514-2021 գրությամբ Ա/Ձ Ինեսա Վարդանի Խոսրովյանին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**